

ՎԱՐՔ ՆԺԴԵՀԻ ԱՍՈՅԹՆԵՐ



Երևան-2001

**Տպագրում է Գագիկ Պաւելի Սրեփանեանի,
Մկրտիչ (Սերժ) Էմիլի Մկրտչեանի եւ
Սոկրատ Շահումի Մկրտչեանի ծախսերով**

Մուտք

ՀՏԴ 941(479.25)
ՊՄԴ 63.3(23)
Ե 661h

ԳԱՄՔԱՐԾՈՒՄԵԱՆ Ո.
Ե 661h Վարք Եժեհի. ասոյթներ/ Ռաֆայէլ Համբարձումեան.-
Եր.: «Ձանգակ-97» հրատ., 2001.-240 էջ, նկար. 48 էջ:

Ե 0503020913 2001
0003(01)-2001

ՊՄԴ 63.3(23)

ISBN 99930-2-252-7

© Համբարձումեան Ո., 2001թ.
© «Ձանգակ-97», 2001թ.

Աշխատութիւնը Գարեգին Նժդեհի ցայսօր հրապարակուած ամենամբողջական կենսագրականն է:

Առաջին անգամ ճշտում եւ գիտական շրջանառութեան մէջ են դրւում նրա կենսագրութեանը վերաբերող բազմաթիւ վաւերագրեր ու փաստեր (իր առաջին բանտարկութեան ու բանտից ազատուելու ճշգրիտ ժամանակը, «Նժդեհ» ծածկանունն օգտագործելու թուականը, տուեալներ իր տոհմի ծագման, նախնիների, ազգականների ու ընտանիքի մասին, Սոֆիայի «Սպայից դպրոցում» ուսանելու հանգամանքների, որպէս հայկական կամաւորական վաշտի հրամանատար բալկանեան պատերազմում ցուցաբերած սիրագործութիւնների մանրամասները, Պարսկաստանում ունեցած գործունէութեան թուուցիկ պատկերը, 1921–1940 թթ. քարոզչական–հասարակական գործունէութիւնը, Արեւմտահայաստանը խորհրդային Հայաստանին միացնելու խնդրում սովետների հետ համագործակցութիւնը բանտից եւ այլն):

Յատկապէս արժէքաւոր է Ղարաբիլիսայի ճակատամարտում նրա ունեցած վճռական դերակատարութեան հիմնաւորումը եւ դրա հետ կապուած՝ ճակատամարտի առանցքային նշանակութեան բացայայտումը, որը Հայոց պատմագիտութեան չուղումնասիրուած խնդիրներից է: Առաջին անգամ հրապարակում են նրա զրական տպագիր գործերի աղբիւրները, մատնանշում է նրա դերն ու նշանակութիւնը 20–րդ դ. առաջին քառորդի Հայ զրականութեան պատմութեան մեջ.

Թէեւ թուուցիկ, բայց ներկայացվում է Նժդեհի մասնակցութիւնը Վանի, Կարսի, Արարատի (նախկինում՝ Դաւալու), Վեդիի, Աւարի, Եղեգնաւանի (նախկինում՝ Շիդլու), Խալիսայի (այժմ՝ Նոյակերտ) ու այլ

վայրերի կռիւներին: Մատնանշուում է նրա հիմնած Սիւնիքի ու Լեռնահայաստանի հանրապետութիւնների վճռական նշանակութիւնը հայոց պետականութեան պահպանման մէջ: Ցոյց է տրուած թրքոբոլշեւիկ զինակցութեան դէմ մարտնչող Սիւնիք-Վապարգողթի՝ որպէս բոլշեւիկեան խաւարասփիւռ վիթխարի կայսրութեան տարածքում գործող վերջին ժողովրդավար պետական միաւորման միջազգային նշանակութիւնը:

Առաջին անգամ նշուում է, որ նրա գաղափարախօսութիւնը, մասնաւորաբար ցեղակրօնութիւնը ու յատկապէս տարօնականութիւնը, հայոց Ոսկեդարի մշակած ազգային գաղափարախօսութեան ինքնապաշտպանական վարդապետութեան՝ Մամիկոնեան ուխտի վերականգնումը, զարգացումն ու արդիացումն է:

Դիւանական բազմապիսի փաստաթղթերի ու տպագիր աղբիւրների վկայակոչումներով հանգամանալի լուսաբանուում է նրա հայրենանպաստ գործունէութիւնը նախ գերմանական իշխանութիւնների հետ, երբ այդ երկիրը յաղթում էր բոլոր ճակատներում եւ ապա՝ արդէն որպէս բանտարկեալ՝ խորհրդային իշխանութիւնների հետ: Վերջին իրողութիւնը եզակի ու աննախադէպ է այն տեսակէտից, որ առանց որեւէ գաղափարական զիջումի տասը տարուայ խոշտանգումներին դիմակայելով հանգերձ, Նժդեհը, օգտուելով Թուրքիա ներխուժելու սովետների մտադրութիւնից, բանտից կարողանում է ԽՍՀՄ իշխանութիւնների հետ գործակցութեան հող նախապատրաստել Արեւմտեան Հայաստանը Խորհրդային Միութեանը միացնելու խնդրի շուրջ:

Աշխատութեան մէջ Գարեգին Նժդեհը ներկայացուում է որպէս բազմահանճար մի անհատականութիւն, մատնանշուում ու շեշտուում են նրա գործունէութեան գրեթէ բոլոր բնագաւառները (20-րդ դարի առաջին կէսի համաշխարհային ռազմական եւ իմաստասիրական մտքի խոշոր ներկայացուցիչ, զօրահրամանատար, ռազմաբուժարտի ու ռազմահոգեբանութեան տեսաբան, հրապարակախօս, հասարակական ու ազգային գործիչ, պետութեան ղեկավար, օրէնսգէտ եւ այլն):

Վերջում տրուում է նրա տպագիր ու անտիպ, նաեւ կորած աշխատութիւնների, իր մասին տպագրուած գրքերի ցայսօր եղած ամենամաքողական մատենագրութիւնը, ինչպէս նաեւ իր ազգաբանութիւնը:

Դրուագ Ա

20-ՐԴ Դ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԲԱԶՄԱՀԱՆՃԱՐ ԱՅԴ ԵՐԵՒՈՅԹԻՆ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՐՓԱԿԵԼ ԻՐ ՄԵՁ

Մեծ մարդը-դա սպասուելիք օգնութիւնն է, մխիթարութիւնը: Մեսիան, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կուղարկէ այս կամ այն ժողովրդի ու մարդկութեան համար:

(«Մեր հեղափոխութեան արարիչը» ճառի սկիզբը)

Նա՛, որ գիտէ նախատեսել անցքերը եւ ցանկալի ուղղութիւն տալ նրանց, նա՛, որ փարոսօրէն լուսատրել գիտէ իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանուկ ճամփաներէն դուրս...

...Նախ կրողը եւ ուսուցիչն է նա ցեղային բարոյականի...

Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգեւարում է եւր: Պարզատես է, վշտակիր, հերոս... Նրան յաջողում է փոխել իր ժողովրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը: Սահման չէ դրուած նրա սիրելու եւ գոհաբերելու կարողութեան...

Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, աղամանդէ ճակատ-ահա՛ կատարեալ առաջնորդը»:

(«Նոր հայը, վաղուայ առաջնորդը» յօրումից)

Քաղաքական սուրբեր են նրանք, որոնք իրենց ուսերին՝ ի խնդիր իրենց ժողովրդի լաւագոյն ապագայի՝ առնում են աւելի ծանր բեռ, քան մարդկօրէն կրել կարելի է: («Բանտային գրառումներ»):

Գարեգին Նժդեհի մասին աւելի ճշմարտացի, ընդգրկուն ու խիտ բնորոշում դժուար է տալ, քան այն, ինչը որ նա բանաձեւել է պետական գործչի ու առաջնորդի մասին իր այս ու բազմաթիւ այլ խոհերում:

Նա քսաներորդ դարի առաջին կեսի համաշխարհային իմաստագիտութեան կարկառուն դէմքերից է, այդ շրջանի պետական ու քաղաքական խոշորագոյն գործիչներից եւ ժամանակի մեծ գորահամանատարներից ու ռազմարուեստի տեսաբաններից մէկը:

Գարեգին Նժդեհը 20-րդ դարի մեր խոշորագոյն հրապարակախօսն է, բեմքասացը, պետութեան ղեկավարը, հայոց նոր ռազմահոգեբանութեան հիմնադիրը, 20-րդ դարի հայոց առաջին սահմանադրութեան հեղինակն ու կիրարկողը, հայերէնի լեզուաոճն ու բառապաշարը հարիւրաւոր նորակերտութիւններով հարստացրած տաղանդաւոր գրող—արուեստագէտը եւ վերջապէս հայոց Ոսկեդարի ծնունդ ազգային գաղափարախոսութեան ինքնապաշտպանական համակարգի՝ Մամիկոնեան ուխտի, վերածնողն ու նոր ժամանակներին ագուցող տեսաբան—իրագործը, որի այդ մարզում կատարած վիթխարի դերը նոյն արժէքն ունի, ինչ որ Կոմիտաս վարդապետի եւ Թորոս Թորամանեանի կատարածը հայ երգի ու երաժշտութեան ու հայոց ճարտարապետութեան ասպարէզներում:

Ցամաքի մէկ վեցերորդը բռնող ու խաւարի բռնապետութիւն հաստատած բոլշեւիկների դէմ ոչ մի ժողովուրդ յաղթական ապստամբութիւն չի բարձրացրել: «Առաջին գնդակը՝ կարմիր բանակի դէմ, արձակեց իմ զինուորը,—գրում է Նժդեհը,— ե՛ւ բովանդակ Ռուսաստանում ե՛ւ Անդրկովկասում վերջինը լինելով՝ մա թողեց կուադաշտը: Ի՛մ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին եւ գերեցին XI Կարմիր բանակի գրեթէ բոլոր զօրամասերը, եւ, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարութեան եւ Մոսկուայի. միջեւ կնքուած պայմանագրին— որով Չանգեզուրը թողնուած է Ադրբեջանին— իմ ժողովրդական բանակը, զենքի ոյժով, խորհրդային իշխանութեան պարտադրեց իր կամքը— Միւնիքի կցումը Հայաստանին»:

Այդ ահարկու կայսրութիւնը պարտութիւն կրեց միայն Գարեգին Նժդեհի Լեռնահայաստանում եւ Հայաստանի Հանրապետութիւնում: **Վիթխարի կայսրութեան հարիւրից անցնող ազգերից**

միայն հայութեան՝ յաջողուեց իր հայրենիքից վռնդել թրքորոյշեւիկեան բանակը, որը 1920 թ. Չախջախիչ պարտութիւն կրելով Չանգեզուրում, իսկ 1921 թ. փետրուարի 18—ին՝ Երեւանում, ստիպուած եղաւ հաշուի նստել հայկական գործոնի հետ: Ընդ որում՝ միայն Գարեգին Նժդեհը կարողացավ կարմիր Ռուսաստանին պարտադրել բանակցութիւնների նստել Լեռնահայաստանի հետ եւ ամենակարեւորը՝ բռնէ առերես հրաժարուելու Չանգեզուրը, Արցախն ու Նախիջեւանը Ադրբեջանին յանձնելու նկրտումներից*:

Մեր հայրենիք ներխուժած հորդանների դէմ ապստամբած եւ իր անկախութիւնը վերականգնած Հայաստանի Հանրապետութիւնը, Միւնիքի ու Լեռնահայաստանի Հանրապետութիւնների հետ միասին, Մերձավոր ու Միջին արեւելքի ու Ռուսական կայսրութեան սահմաններում գործող միակ ժողովրդապետութիւնն էր: Այդ հսկայական տարածութիւնում, յատկապէս կոմունիստական խաւարասփիւռ կայսրութիւնում, 1921 թ. միայն մի օջախ կար, որտեղ վառուում էր ժողովրդավարութեան, ազատութեան ու անկախութեան ջահը. դա Հայաստանի Հանրապետութիւնն ու Լեռնահայաստանն էր:

Սա՛ է ռուսեւթուրք զինակցութեան դէմ Չանգեզուրում եւ Հայաստանի Հանրապետութիւնում հայ ժողովրդի ազատամարտի համաշխարհային—պատմական նշանակութիւնը եւ հէնց այդ ազատամարտի շնորհիւ է, որ թրքորոյշեւիկը ստիպուած հանդուրժեց Խորհրդային Հայաստանի գոյութիւնն իբրեւ Վրաստանին ու Ադրբեջանին հաւասարազօր հանրապետութիւն:

Գարեգին Նժդեհը դարձաւ 20-րդ դ. հայոց ռազմարուեստի խոշորագոյն տեսաբանը: Նա վերականգնեց, հարստացրեց ու կիրարկեց հայոց կորուսեալ ու մոռացուած մարտաբառապաշարը, յատկապէս վարժանքների ժամանակ հայերէն խրախոյաններն ու կոչ—հրամանները (հաւա՛ք, շրջա՛ն, ուղղւ՛ր, ծնկա՛ն, ցրու՛ր,

* Հայաստանի դիմադրութիւնը կորելու, հայ ժողովրդի միասնութիւնը ջլատելու եւ ազատամարտը պառակտելու դիտարութեամբ Մոսկուան 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի կոմունիստ իշխանութեան անունից սուտ յայտարարութեամբ՝ Նախիջեւանն ու Չանգեզուրը հոչակեց Հայաստանի անբաժան մաս: Վերջնականապէս յանդուրժու, որ չի կարողանում Չանգեզուրը բռնակցել Ադրբեջանին, Ռուսաստանը ստիպուած եղաւ Հայաստանի ղեկավարութեան անունից 1921 թ. յունիսի 12-ին եւ 13-ին յայտարարել, որ Չանգեզուրը Հայաստանի խորհրդային հանրապետութեան անբաժանելի մասն է:

¹ Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2001 թ., էջ 179:

փոկի՝ առ, խոցի՛ր, կրկնակի դա՛րձ եւ այլն)՝¹:

Հիմնուելով Մամիկոնեանների մշակած ռազմագիտութեան, ռազմարուեստի տեսութեան ու ռազմահոգեբանութեան վրայ եւ դրանք հարստացնելով Ռուբինեան իշխանների, Լեւոն Մեծագործի, Դաւիթ-Բէկի եւ 20-րդ դ. հայ խոշոր հայդուկապետներ Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Եփրեմ խանի, Համազասպի, Քեռու, Խէչօյի եւ ուրիշների մղած կռիւների, յատկապէս Ղարաքիլիսայի հերոսամարտում կիրառուած ռազմարուեստի վրայ, Գ. Նժդեհը բիւրեղացրեց, ամբողջացրեց եւ մի նոր բարձունքի հասցրեց հայոց ռազմագիտութիւնը՝ փակելով այն անջրպետը, որ առաջացել էր մեր ազգային ռազմարուեստի մէջ՝ Դաւիթ-Բէկի ու Արցախի մելիքութիւնների հրաշակերտած յաղթանակներից ի վեր:

19-րդ դարի երկրորդ կէսին եւ 20-րդ դարասկզբին Եւրոպայում մշակուեց փիլիսոփայական նոր ուղղութիւն, որը հոգեվերլուծութեան դիտակէտից ուսումնասիրում էր ազգային զարթօնքի ու վերանորոգչութեան խնդիրները, ժողովրդի, ցեղի ու անհատի յարաբերութիւնները (Տոմաշ Մասարիկ, Ալֆրէդ Յոլլէ, Գրունդվիգ, Գուստաւ Լը Բոն, Գաբրիէլ Տարդ, Կայզերլինգ, Լէոպոլդ Վիգէ, Ֆաբր դը Օլիվէ, Կարլէյլ, Բերգսոն, Ռընան եւ ուրիշներ): Ուսումնասիրելով եւրոպական իմաստասէրների, ընկերաբանների, հոգեվերլուծաբանների տեսութիւնները եւ, հիմնուելով հայ բազմադարեան հասարակական-քաղաքական մտքի ու իմաստասիրութեան փորձի ու նուաճումների վրա, Գարեգին Նժդեհը Հայկ Ասատրեանի եւ ուրիշների հետ միասին ստեղծեց փիլիսոփայական, ընկերաբանական ու հոգեվերլուծական յիշեալ ուղղութիւնների հայկական դպրոցը, որը, ցաւօք, դեռեւս ուսումնասիրուած չէ:

Նրա իմաստասիրական միտքը հիմնականում դրսեւորւում ու խտանում է փոքր չափերի ասոյթների մէջ: Հարագատներին Տաշքենդից գրած 1955 թ. մարտի 21-ի նամակում նա շեշտում է.

«Թուղթ չլինելու պատճառով բանտարկութեանս առաջին տարիներին ես ակամայ գրում էի Ֆրագմենտալ, իսկ երբեմն՝ աֆորիստիկ*, որոնք Ֆրագմենտալ բնոյթ ունեն»:

Այս առումով մենք աներկբայ կարող ենք ասել, որ նրա փիլիսոփայութեան ատաղձը զուտ ազգային է նաեւ ձեւի առումով, որը կառուցուած է նոյն սկզբունքներով, ինչ որ մեր քերթութիւնը, իաչքարագործութիւնը, շարականներն ու հոգեւոր այլ երգերը, մանրանկարչութիւնը.

– փոքր չափերի մէջ անընդգրկելի խտացումներ:

Այս տեսակի իր բազմաթիւ ասոյթներով Գարեգին Նժդեհին անվարան կարելի է դասել համաշխարհային աֆորիստիկայի (ասոյթակերտութիւն) խոշորագոյն դէմքեր Դէմոսթէնեսի, Կոնֆուցիոսի, Սենտկայի, Բէկոնի, Շոպէնհաուէրի, Գեթթէի եւ նմանների շարքը: «Նժդեհի ոճը բնկորային է, միաժամանակ՝ ամբողջական... Էջեր, շա՛րքեր մեր կեանքում խօսում, գրում կամ գործում են «արիւնով ու ջղերով», – Նժդեհ փիլիսոփայի մասին գրում է նրա ամենամերձ զինակիցն ու գաղափարակիցը՝ 20-րդ դարի հայ խոշորագոյն իմաստասէրներից մէկը՝ Հայկ Ասատրեանը, – բարձր տեմպերամենտի էի և հզօր անհատականութեան հոգեբանական տրիպարներ են դրանք, որոնք աչքի են ընկնում իրենց հարազատած գաղափարներն ու ճշմարտութիւնները կրօնական խանդաւանդանք ասրելու յայտնութեամբ և իրենց ինքնատիպ ոճով – ընդհանրապէս ֆրագմենտար (կտրատուած) բնոյթի [են]:

Անկասկածօրէն դրանցից մէկն այս գրքոյի (Ակադի ունի Նժդեհի «Յեղի հոգու շարժը» գիրքը) հեղինակն է...

Պիպի դիմորոշէնք հեղինակը, այսինքն՝ պարզեւք հոգեւոր կարգի այն տուեալները, որոնք պայմանաւորում են նրա ցեղաշունչ խօսքը և գրուածքը:

* Նամակի ուսերէն բնագիրը գտնուում է Լեւոն Տեր-Յարութեանի դստեր՝ Օլեայի բոնեքի Չաքարեանների ընտանեկան դիւանում, լուսապատճենները՝ ՀՀ Պատմութեան պետական թանգարանում եւ «Նախիջեան» հայրենակցական միութեան գրադարանում, հայերէն բարգմանութիւնը տես «Նախիջեան» պարբերաթերթ, 2001, թիւ 20, էջ 14: Չաքարեանների ընտանեկան դիւանում պահպանում են բանտից հարազատներին գրած Նժդեհի մօտ 50 նամակ, ինչպէս նաեւ զանազան ատեաններից յղած Լեւոն Տեր-Յարութեանի բազմաթիւ դիմումների պատճեններն ու դրանց մի մասի պաշտօնական պատասխանները, որոնց օգնութեամբ բազմաթիւ շտկումներ մտցուեցին Նժդեհի կենսագրութեան բանտային տարիների շտամագիրքում կողմերի վրայ: Այստեղ ուզում ենք յատկապէս նշեալ տիպի Դոնարա Չաքարեանի (Օլեայի հարսի) բժախնդիք ու հոգատար վերաբերմունքն այլ ձեռագրերի հանդէպ, որոնք նա խնամքով դատասէլ, ծրարել, պահում է ընտանեկան դիւանում: Բանտից գրած Նժդեհի բոլոր նամակները ուսերէն են, քանի որ խորհրդային բանտարկեալը իրատեք շուրջ ուսերէնից բացի այլ լեզուով նամակ գրել որեւէ մէկին:

¹ Տես Գարեգին Նժդեհ, Չորաշաբաթային կանոնադրութիւն, Երևան, 1993, էջ 23-54:

Ա. Բարձր խառնուածք.—Ո՛չ միայն Նժդէհի խօսքը, այլև նրա գրական ոճը թողնում են ա՛յն անայայլ տպատրուքները, որ նա բարձր խառնուածքի մի սրբազան գործ է. Նա ապահովում է ներգերքնականին, սակայն սեփական «ես»—ի փլուզման վրանգից սարսափած՝ ներեսում է մի բնական պատուանդան, աստուածացնում մի համաեսու և համակուելով կրօնական զգացումով, թափանցում է ենթագիտակցականի մարզում: Համաեսու, որ դարձած է Նժդէհի հոգեւոր պատուանդանը, ցեղն է: Սա է շեշտում և երանգաւորում նրա խառնուածքը: Ենթագիտակցականը, որում անհատական «ես»—ը հանդիպում է ցեղային «համաեսու»—ի տարերքին, ամեն ղէպքում չի հանդիսանում հոգեւոր ներշնչարան: Այդ կախում է նրանից, թէ տուեալ խառնուածքը որպիսի՞ ղիրքորոշման է մղում իր անօթին—անհատին, բախողակա՞ն, թէ՞՞ ներդաշնակելի: Առաջին ղէպքում՝ ցեղային և անձնական «ես»—երի միջեւ սրբազան է անկամրջելի մի վիճի, որի հետեւանքով անհատը մատուցում է ներքին ողբերգութեան. նրա խառնուածքը սկսում է աղօտանալ և ի վերջոյ նա դառնում է սովորական մի էսսայաչար, անձնական փառասիրութեան գերի: Երկրորդ ղէպքում՝ երկու «ես»—երի ներդաշնակ շուրջումով կադապարում է ցեղատիրական մարդու հուժկու անձնատրուքները: Ներհոգեւորի այս բարեբախտ շուրջումով, սհա, կերպատրուած է Նժդէհի էութեան երկրորդ գիծը,— նրա անհատականութիւնը:

Բ. Հօր անհատականութիւն.— Մենք գործ ունենք փոքրկալից անցեալի տէր մի անհատի, հայկական շափանիշներով վերցրած պատմական մի անձնատրուքեան հետ... որն իր ժողովրդի վրանգի պատմական պայմաններին՝ դառնում է նաև նրա մարգարէն, գուշակը և առաջնորդը...

Գ. Ֆրագմենտարիզմ.— Արդէն նկատուեց, որ բարձր տեսնականութի ու հօր անհատականութեան հոգեբանական տիպարին իւրայայտուել է ֆրագմենտար մտածում, որով և ոճ: Մեր գրականութեան մէջ այսօրինակ ոճն իր կարգաւորութեանն է հասնում Նարեկացու մօտ, իսկ հասամարդկային հոգեւոր սրբազանութեան մարզում նրա տիպանը Նիցշէն է:

Նժդէհի ոճն ու մտածումն էլ կրում են ֆրագմենտարիզմի որոշ դրոշմ: Նրա մտածումն արդէն գուրկ է սիւրբանների շրջանակում սեղմելու ընդունակութիւնից: Բոլոր ֆրագմենտարիստների պէս նա էլ սրբազանութեան է ո՛չ թէ թելերով, որոնք ի վերջոյ հիստուածքի, այսինքն՝ սիւրբանի տիպի վերածուեան այլ հանգոյցներով: Ո՛չ թէ խաղաղ գարգացում, այլ խոյանք. ո՛չ թէ երկարապարում և զգուշատր շարայարումներ, այլ կարճ խորհրդածութեանց յանկարծօրէն յաջորդող վճռաշունչ բանաշեւումներ— սհա Նժդէհի մտածման եղանակը:

Ֆրագմենտար ոճն ըստ ինքեան ապացոյց է ենթակայի հոգեւոր աշխարհի հարստութեան և խորութեան:

Ֆրագմենտարիստը խուսափում է շեւերին և սովորութեանց կոմպրոմիսներ անել: Չօրեղ է նրա մտքի կադապարիչ ազդակը: Բնագանցումի տրուեալագէտ է նա: Նրա արտայայտութիւնները պատկերատր ընդհանրացումներ են—համադրութիւն և այլաբանութիւն միասին: Նրա երեսակայութիւնն անիշխանական մի ուժ ունի, մի ուժ, սակայն, որ միշտ նոր կերպեր է ծնում. ֆրագմենտարիստը նորատրեղծ է: Նրա երջանկութիւնն է դառնալ իր ներկայացրած հաւաքական «ես»—ի պարզամտութիւն: Այդ է պարզապէս, որ մարդկային յարաբերութեանց աշխարհում, հոգեհաղորդ տարրերի համար նա դառնում է անգերագանցելի կազմակերպիչ: Մլաքներ ունի ֆրագմենտարիստի խօսքը, նրա մտքերը պայթուցիկներ են, որոնք ջգրում են սրտերը հրդեհել. երկարաշունչ չեն նրանք, որովհետեւ շրթունքի խօսք լինելուց առաջ, սրտի պոռթկումներ են:

Ֆրագմենտար ոճաբանի հոգեբանութեան այս գիծերը մենք ընդնշմարում ենք արդէն «Էջեր իմ օրագրէն» ու «Բաց Նամակներ Հայ Մտարականութեան» գրքոյկներէն, «Որդիների պայքարը հայրերի դէմ» գրքի և «Յիշիք պատերազմը» յօդուածաշարքի մէջ: Մենք հանդիպում ենք նրանց նաև ա՛յս գրքոյկում, ինչպէս նաև բոլոր ղէպքերում, երբ կարդում և մանաւանդ երբ լսում ենք Նժդէհին... Նժդէհը նրանցից է արդէն, որոնք նոյնանում են իրենց երկին»¹:

Վերջապէս Գարեգին Նժդէհին անվերապա հօրէն կարելի է Համարել Հայոց գրականութեան ու լեզուամշակոյթի ամենաինքնատիպ ներկայացուցիչներից: Նկատի ունենմ ո՛չ միայն նրա գուտ գրական ստեղծագործութիւնները՝ արձակ բանաստեղծութիւնները, որոնք մեր գրականութեան այդ տեսակի լաւագոյն նմուշներից են (օրինակ՝ «Ռագմիկը չի մեռնում») կամ ինչօչին նուիրուած՝ «Խոկում է Արարիչը», ինչպէս նաև Գարեգին Դարդունի եւ studiosus ստորագրութեամբ «Պատանի», «Ընկեր», «Խաթաբալա», «Ժայռ», եւ այլ թերթերում 1911–1917թթ. տպագրած արձակ քերթուածները եւ 1915 թ. փետրուարի 23–ին աւարտած նրա արձակ անտիպ բանաստեղծութիւնները («Մեռնող սրտի Հեքիաթը», «Ինչո՞ւ ես տխուր», «տապանագիր», «Հովուի սէրը», «Հաշտութիւնը», «Իմ սէրը»,

¹ Հ. Ասատրեան, Գ. Նժդէհ «Յեղը և տականքը». խորհրդածութիւններ, «Յեղ և հայրենիք» կիսամեայ հանդէս, թիւ 2, Սոֆիա, 1936, յունիսի 15, էջ 57; Ա. օ. Նժդէհ, Պէյրութ, 1968, էջ 466–470:

«Մեռնող սրտի հեքիաթը»¹), այլև իր ամբողջ խոհախմաստասիրական ստեղծագործությունն ու հրապարակախօսությունը: Հարկերաւոր ոճեր ու բառեր է ստեղծել, որոնք վսեմացնում, հզորացնում ու պերճացնում են մեր լեզուն (ահավարութիւն, անդորրաւետ, անապաշխարհ, անազատունակ, անզիղջ, աշխարհաժուփ, ապագօր, ապառաժահիմն, առհաւութիւն, աւանդագահ, աստուածազարդ, արիադաւան, արդիւնազօր, բաժանատիրութիւն, բազմադէտ, բնօրէն, բռնամահ, գողուղի, գրավաստակ, գրչամարտ, գոտելոյծ վիճակ, գերապրեց հայը, դաւամիտութիւն, դիմաժողութիւն, դիւապետութիւն, դժօխազգի, դրօշատեր, եսաթափ, եսամերժ, երկրասող, երջանկատու, զօրոյթ, թեւատ, թշուառաբանել, թրթրոլշեփզմ, թքելի, ինքնազօր, ինքնահսկայացում, խեղաբարոյ, խորարթուն, խորհողութիւն, կարծայուշ, կորովաթափ, կրկիսապաշտական, հակառակայորդոր, համահայ, հայրենակրօն, հայրենատէր, հայրենատիրական, հայաբարոյ, հայաթշնամի, հզօրազօր, հզօրանք, հոգեխզում, հոգեհաշմ, հոգեգիծ, հրաբերան, ճշմարտագանց, մահապատրաստ, մահամերժ ոգի, մանրագործ, մրափողութիւն, յաւերժաշունչ, յաւիտենագիր, յորդեռանդ, նեղհաւատ, նենգագործ, նիւթակրօն, նուաստախոհ, շինարարել, շնացեղ, ոգեթափ, ոգեսպան, ողջապահիկ, ոճրառատ, չարամեկնել, չարարուեստ, չեկայաչարչար, պաշտօնապղծութիւն, պայքարունակ, պատմաճանաչ, պատրապաշտ, պարսաւասէր, պղծադաւան, քանապաշտ, ստամտաւորական, ստրկագրաստային, վայնասող, վայրաբանութիւն, վաստականուէր, վսեմաբան, վսեմախոհ, տառապապաշտ, տարօնաշունչ, տարօնականութիւն, տկարոգի, ցանցառաթիւ, ցեղազգացիկ, ցեղախոյս, ցեղակրօն, ցեղակնիք, ցեղել, ցեղահաղորդ, ցեղահայհոյութիւն, ցեղահանձար, ցեղամարդ, ցեղամերժ, ցեղաճանաչ, ցեղահայտնութիւն, ցեղապահ, ցեղապսակ, ցե-

ղավար, ցնօրապաշտ, ուժապաշտ, ուղեհարթում, փարոսօրէն, փառագարդել, փառապսակ, փոխառիկ, փութավճիռ եւ այլն):

Իր պատկերաւոր մտածողութեամբ նա հնրերից յիշեցնում է եղիչէ պատմիչին ու սբ. Գրիգոր Նարեկացուն, նորերից՝ Յակոբ Օշականին, յատկապէս Աւետիս Ահարոնեանին, որի հետ ոճի առումով բաւական ընդհանրութիւններ ունի:

Նրա պատկերային մտածողութեան մասին զաղափար տալու համար բերենք մի քանի օրինակներ.

«Ո՞ր է իր երեկ, երբ դաւադրուած հայութիւնը մի աստուածային խոյանքով Արարատեան երկիրը վերստին ցեղի տունը դարձրեց:

Իր սեփական տառապանքի մէջ մկրտուած հա՛յն է աշխարհ գալիս... Նո՞ր հայը, որի դրօշակէն վաղը պիտի կախուի մեր ցեղի յաղթանակը:

Մեր կեանքում ամէն կեղծիք մի գերեզման է ճշմարտութեան համար:

Վայ այն ժողովրդին, որի առաջնորդը կատարեալ չէ՝ ապագան բազում խաչեր ունի պահած նրա համար:

Ղարաքիլիսի օրհասական օրերին թուրք հորդաների հետ մահը կանցներ Ախուրեանը... Միւնիքում պանթուրանականները կը մկրտէին լեռնահայութեանը վերածել դիակների կամուրջի՝ թուրք եւ թաթար հայրենիքների միջեւ»:

Ընթերցող, ես տեսայ հոգով ազատը ստրկութեան մէջ եւ սիրեցի մարդը: Ես տեսայ ստրուկն ազատութեան մէջ եւ գարշեցի մարդէն»:

Այս եւ բազմաթիւ այլ իրողութիւնները նկատի առնելով անվարան կարելի է պնդել, որ 20-րդ դարի հայոց պատմութիւնը բազմահանձար այդ անհատականութեանը չի կարող պարփակել իր մէջ: Նա իր դերով ու նշանակութեամբ դուրս է գալիս 20-րդ դարի շրջանակներից եւ միանում է երկրորդ հազարամեակը ոգեզարդող մեր հաւերժակեաց մենաւորներին՝ Գրիգոր Մազիստրոսին, Աշոտ Ողորմածին, Լեւոն Մեծագործին ու նմաններին:

¹ Տե՛ս Եղ. Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարան, «Հաւաքածոյ» ֆոնդ: Սոֆիայից մօրը եւ եղբորը՝ Լեւոնին ուղղուած 1906 թ. հոկտեմբերի 15-ի նամակից տեղեկանում ենք, որ նա շուտով հրատարակելու է իր 70 բանաստեղծութիւնները, որոնց մի մասը գրել է Սոֆիայում (ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների պետական կենտրոնական արխիւ (այսուհետեւ՝ ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ), ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 553), հայերէն թարգմանութիւնը տպագրուած է «Նախիջեան» պարբերաթերթ, 2001 թ., թիւ 20: Նոյն դիւանում պահպանուած մէկ այլ փաստաթղթում նշուած է. «Բանաստեղծութիւնների տետրը կցել դատական գործին» (ֆ. 4047, ց. 3, գ. 6, էջ 4409): Նժդեհը «Գ. Դարդունի», «Գ. Դ.», «Գ.» եւ «Նժդեհ» ստորագրութեամբ 1911-1917 թթ. չափածո ու արձակ բանաստեղծութիւններ է հրապարակել Թիֆլիսի, Բաքուի եւ Գիւմրիի թերթերում (տե՛ս սոյն աշխատութեան մատենագրութիւնը):

ԵՐԿՈՒՆՔ

Նժդեհներ (Գարեգին Տեր-Յարութիւնեան) ծնուել է 1886 թ. յուլի 1-ին, Նախիջեւանի գավառի Կզնուտ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու քահանա եղիչ Տէր-Յարութիւնեանի ընտանիքում, որի հայր Սահակը եւս նոյն գիւղի քահանան էր: Իր Աննա (Անիկա) քրոջ որդի Սիմոն Բաբայեանի (ծն. 1906 թ. Կզնուտում, բնակում է Երեւանում) վկայութեամբ, նժդեհէնց ցեղը, որին կզնուտցիները «Գլօյէնք» էին անուանում, 1829–1830 թթ. գաղթել են Պարսկահայքից¹: Նրանց հօրական կողմը, նաեւ եղբայր Լեւոն Տէր-Յարութիւնեանն ու նրա որդի Հրանտ Տէր-Յարութիւնեանը, խօսում էր խոյի բարբառով: Այդ բարբառով էին խօսում նաեւ Նժդեհի մօրական կողմի գերդաստանը, իր վեց մօրաքոյրները*: Ս.Բաբայեանի վկայութիւնը հաստատում են պատմական աղբիւրները, ըստ որոնց «Հողագործք հայք են Գաղթեալք ի Սալմաստա, տունք 200: Եկեղեցի նորաչէն է կաւակերտ, փայտայտակ եւ անշուք»²:

Երկու տարեկանում հայրը մահանում է**, ընտանիքի հոգսը մնում է Եփրեմ հորեղբոր եւ մօր՝ Տիրուհու-Տիրոխնու³ (գիւղացիք

նաեւ Խաթայի էին անուանում) վրայ: Հարագատների վկայութեամբ, Տիրուհին Կզնուտում յայտնի ու նշանաւոր Գիւլնազարեանների տոհմից էր, հօր անունը Նազար (Գիւլնազար) էր, ծնուել էր 1850–ական թուերին, եօթը քոյր են եղել¹, որոնցից մէկը ամուսնացել է Ազնաբերդում, մօրաքոյրերից մէկի որդին՝ Ստեփանը, Յղնա գիւղի փեսայ էր:

Նժդեհը ունէր մէկ եղբայր, երկու քոյր, ինքը փոքրն էր: Սիմոն Բաբայեանը իր մօրից լսածով վերապատմում է, որ Գարեգինը համարձակ ու արիասիրտ երեխայ էր, միաժամանակ բարի ու կարեկցող: Շատ ընթերցասէր էր: Երբ բոլորը հաւաքուում էին սեղանի շուրջ ճաշի կամ ընթրիքի, հագուադէպ էր ժամանակին միանում, միշտ ինչ–որ գիրք էր կարդում: Յատկապէս շատ է սիրել Բաֆֆու պատմավէպերը: Երկու հօրեղբայր է ունեցել՝ Եփրեմ եւ Գեւորգ: Հօրեղբայրներից մեկի երկու որդիները ցարական բանակի սպաներ էին, որոնցից աւագը նպաստել է Գարեգինի ռազմական կրթութիւն ստանալուն: Նրանց տունը գտնուում էր գիւղի կենտրոնում, եկեղեցու մօտ²:

Բանտարկյալի հարցաթերթում իր մասին տուել է հետեւեալ տեղեկութիւնները.

Տէր-Յարութիւնեան Գարեգին եղիչի, ծն. 1886 թ., ք. Նախիջեւան, Երեւանի նահանգ: Մշտական բնակավայրը մինչեւ ձերբակալուելը – Սոֆիա, Յար Բորխի փող. 92:

Զբաղմունքը եւ մասնագիտութիւնը – Լրագրող: Աշխատանքի վերջին տեղը – Խմբագրութիւն «Ռազմիկ» թերթի, «Սվետոզլազ» ամսագրի:

Պաշտօնը – Լրագրող: Ազգութիւնը – Հայ: Քաղաքացիութիւնը – Բուլղարիա: Կուսակցականութիւնը – Անկուսակցական: Կրթութիւնը – Բարձրագոյն: Սոցիալական ծագումը – Հոգեւորականի որդի:

¹ Ս. Բաբայեանի խօսքը իր քնու մասին, «Նախիջեւան», 2001, քի 20, էջ 11:
² Ղ. Ալիյան, Սիսական, Վեներտիկ, 1893, էջ 381; Հ. Եփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Խո. Բ. գիրք ա, Վեներտիկ, Ս. Ղազար, 1907 թ., էջ 385:
* Իր քրօջ աղջիկը Սիմոն Բաբայեանի քոյր Հայկուշը, որը 98 տարեկանում մահացաւ Երեւանում, 2001 թուականին, դարձեալ խօսում էր խոյի բարբառով:
** Ըստ քրօջ տղայ Սիմոն Բաբայեանի, թունտորել են հարսանիքում: Այս տուեալը հաստատում է դիւանական փաստաթղթերով: Նժդեհի 1909 թ. դատավարութեան գործում նշուած է, որ Տէր-Եղիշին թունտորել են գիւղապետի օգնական Մեսրոպ Բաբայեան Շահնազարովի կուսակիցները, որով այդ գերդաստանների միջեւ առաջացել է քչնամութիւն (տե՛ս Գ. Նժդեհի հարցաքննութեան արձանագրութիւնը, Դաշնակցութեան գործ, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ), ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 600–601; ֆ. 4047, ց. 3, գ. 6, էջ 4409–4410:
³ Նժդեհի քիֆիւնեան բնակուած վայրերը, «Նախիջեւան», 2001, քի 19, էջ 9:

¹ Ս. Բաբայեանի խօսքը., «Նախիջեւան», 2001, քի 20, էջ 11:
² Նոյն տեղում:

Դատուածութիւնը – Չունեմ:
 Ժամանակաւոր կալանքներ – Չունեմ:
 Ընտանիքի կազմը
 Հայրը – Տէր–Յարութիւնեան Եղիշ Սահակի, մահացել է 1888 թ.:
 Մայրը – Տէր–Յարութիւնեան Տիրուհի Նազարի, մահացել է 1940 թ.*
 Կինը – Տէր–Յարութիւնեան Էփիմէ Սուքիասի, ծն. 1902 թ., ք. Սոֆիա, փող. Յար Բորիսի 92:
 Երեխաները – Տէր–Յարութիւնեան Սուքիաս, ծն. 1936 թ.:
 Եղբայրները – քոյրերը – Տէր–Յարութիւնեան Լեւոն Եղիշի, ծն. 1884 թ., որտեղ է ապրում՝ չգիտեմ:
 – Տէր–Յարութիւնեան Աննա Եղիշի, ծն. 1881 թ.** , որտեղ է ապրում՝ չգիտեմ:
 – Տէր–Յարութիւնեան Յուլիա Եղիշի, ծն. 1880 թ., որտեղ է ապրում՝ չգիտեմ:
 Բանաւոր դիմանկար
 Հասակը – Բարձր (171 սմ):
 Կազմուածքը – Գէր:
 Ուսերը – Հորիզոնական:
 Վիզը – Կարճ:
 Աչքերի գոյնը – Մուգ շագանակագոյն:
 Դէմքը – Ուղղանկիւն:
 Ճակատը – Բարձր:
 Երթուները – Հաստ:
 Կզակը – Ուղիղ:
 Երբ է բանտարկւել – 1944 թ. Հոկտեմբերի 11–ին, օրդեր թիւ 476:
 Բանտարկութեան հիմքը – ԽՍՀՄ Պաշտպանութեան ժողովր-

դական կոմիսարիատի «Սմերչ»* Հակահետախուզութեան գլխավոր վարչութեան որոշումը՝ խափանման միջոց ընտրելու մասին:

Հարցաթերթը լրացուած է ԽՍՀՄ Պետական անվտանգութեան ժողովրդական կոմիսարիատի ներքին բանտի բանտարկեալների ընդունարանում, ք. Մոսկուա»¹:

Սկզբնական կրթութիւնը ստացել է Կզնուտի ծխական դպրոցում, Հաւանաբար Շամիլ վարժապետի մօտ², ապա (քանի որ 1880–1903 թթ. ցարական հրամանով փակուել էին Կովկասի հայոց բոլոր դպրոցները) Նախիջևանի «բարձրագոյն տարրական» կոչւող ուսսական դպրոցում, որը Համապատասխանում էր եօթնամեայ դպրոցին, այնուհետեւ, նոյն պատճառով, Թիֆլիսի ուսսական գիմնազիայում, որից յետոյ երկու տարի սովորել է Պետերբուրգի Համալսարանի իրաւաբանութեան բաժնում**:

«Հայոց յեղափոխական շարժմանը միացել եմ 17 տարեկանից (իմա՝ 1903 թ.: Ծանօթ.՝ Ռ. Հ.) իբրեւ գիմնազիստ: Յետագայում լքել եմ համալսարանը եւ գործել ցարիզմի ու սուլթանականութեան դէմ»³

«ՀՅԴ մարմիններու կարգադրութեամբ 1904–ին կը շրջուի»

* Ռուսերն «Սմերչ շախմատ» (մահ լուսններին) բառակապակցութեան յապատումն է: «Սմերչը» հիմնել ու անուանադրել է Ստալինը 1943 թ. ապրիլին՝ ՆԳ մարմինների եւ չէկայի «յատուկ բաժնիներին» հիմքի վրայ: Կազմակերպութիւնը, որ գլխաւորում էր զեմերալ Աբակուովը, անմիջականօրէն ենթարկում էր Ստալինին: Կազմալուծուել է 1946 թ. մայիսին եւ վերածուելու իբրեւ «Երրորդ գլխաւոր վարչութիւն»:
¹ Գարեգին Նժդեհի՝ ձերբակալութեան հարցաթերթը, ՀՀ Ազգային անվտանգութեան նախարարութիւն (այսուհետեւ՝ ՀՀ ԱԱՆ), ֆոնդ 12997, քրեական գործ 11274, հայերէն թարգմանութիւնը՝ «Նախիջեան» պարբերաթերթ, 2001 թ. սահմի (մարտ), թիւ 19, էջ 7: Տե՛ս նաեւ՝ առաջին հարցաքննութեան (1944 թ. նոյեմբերի 2) արձանագրութիւնը, ՀՀ ԱԱՆ կարծուած գործերի ֆոնդ (այսուհետեւ՝ ԿԳՖ), հայերէն թարգմանութիւնը՝ «Նախիջեան» պարբերաթերթ, Երեւան, 2000 թ. սահմի (մարտ), թիւ 12, էջ 7: Բնագիրը հրատարակել է Վ. Յովսէփեանը (Гагерин Нжде и КГБ, 2001, էջ 73-78):

² Վկայութիւնը Նժդեհի քրոջ տղայ Միսն Բաբայեանի, «Նախիջեան» պարբերաթերթ, 2001 թ., թիւ 20:
 ** Նախիջեանի բանտում 1909 թ. յուլիսի 8–ին Գարեգին Նժդեհի հարցաքննութեան արձանագրութեան մէջ Նժդեհը ասել է, թէ ինքը սովորել է Երեւանի գիմնազիայում եւ Սոֆիայի համալսարանում: Տե՛ս ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 600:

³ Ինքնակենսագրութիւն, ՀՀ ԱԱ նախարարութեան դիւան, գործ 11278, հտ. 4: Բազմաթիւ սխալներով ու աղաւաղումներով տպագրուած է՝ Գարեգին Նժդեհ, Հատընտիր, 2001 թ., էջ 302-305:

* Հարագտների վկայութեամբ Նժդեհի մայրը մահացել է 1938 թ. փետրուարի 21–ին (տե՛ս Ա. Վարդանեան, Նժդեհեան մատուցներ, Երեւան, 2001 թ., էջ 8):
 ** Նժդեհն իր 1947 թ. դեկտեմբերի 10–ին կայացած հարցաքննութեան ցուցմունքում յայտնում է, որ Աննան 70 տարեկան էր, Սնոֆիան (Յուլիա)՝ 65: Կարծում ենք, այս տուեալն աւելի ճիշտ է (տե՛ս Գ. Նժդեհի 1947 թ. դեկտեմբերի 10–ի հարցաքննութեան արձանագրութիւնը: Հարցաքննել է մայրը Վարդան Մելքունովը: Ваце Овсепян, Гагерин Нжде и КГБ, Ереван, 2001, 90):

Սալմաստ՝ իբրև կուսակցական գործիչ, Սամսոն Թադէոսեանի* տրամադրութեան տակ»¹:

Այստեղ Սամսոն Թադէոսեանի միջոցով ծանօթացել է բուլղարահայ մեծահարուստ դաշնակցական Սուքիաս Սուքիասեանի հետ, որը հաւանաբար Պարսկաստանում ազդեցիկ գործիչ Սամսոն Թադէոսեանի միջնորդութեամբ նրան առաջարկել է իր ծախսերով սովորել Սոֆիայի համալսարանում: Իր 1909 թ. հարցաքննութեան արձանագրութիւններում Նժդեհն ասում է, թէ իբր ինքը 1904 թ. Երեւանի գիմնազիան աւարտելուց յետոյ մեկնում է Վիեննա²: Իրականում անցել է Պարսկաստան: Այս իրողութիւնը թաքցրել է պարսկական յեղափոխութեանը իր մասնակցութիւնը եւ ՀՅ Դաշնակցութեան անդամ լինելու մեղադրանքը չէզոքացնելու համար, ինչը նրան ի վերջոյ յաջողել է:

«1906 թ. անցել եմ Բուլղարիա եւ մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի եւ Լիապով Գուրիմի միջնորդութեամբ ընդունուել Սոֆիայի սպայից դպրոց՝ Դմիտրի Նիկոլով անունով: Աւարտելով դպրոցը (1 կարգ), վերադարձել եմ Կովկաս՝ Մուրադի հայդուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար: Այնուհետեւ գործել եմ Պարսկաստանում»
(Ինքնակենսագրութիւն):

Այս մասին Աւօն գրում է. «1905 թ. Պուլկարիոյ մէջ ՀՅ Դաշնակցութեան հիմնադիր Ռոստոմի Զանքերով, ՀՅԴ Բիրոն, Պալքանեկան Կեդրոնական կոմիտէին հետ համախորհուրդ, համաշայնած էր Մակեդոնական յեղափոխական կոմիտէութեան հետ եւ Պուլկար կառավարութեան ալ գաղտնի հաւանութեամբ որոշած՝ զինուորական ընդունակութեան րէր հայ երիտասարդները մտցնել պահեստի սպայից Քենաժեոյի (Սոֆիա) վարժարանը: ՀՅԴ Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի նիւթական աջակցութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ այդ դպրոցը ուսանելու դրկել չորս հայ երիտասարդներ, որոնցմէ մէկն էր Նժդեհ, միւսը՝ Թորգոմը: Նժդեհ Պարսկաստանում»

* Սամսոն Թադէոսեանը (իսկական անունը՝ Ստեփան) ազուլիսցի էր, Քրիստափոր Միքայելեանի քրոջ տղան: Մահացել է 1945 թ. մարտի 1-ին, Թեհրանում: Տես, Ալպան Ստեփանեանի յուշերը՝ Թեհրան, 1966, 1

¹ Յեղափոխական ալպում, Ա հատ որ, էջ 338, հմտ. Աւօ, Նժդեհ, Պէյրութ, 1968, էջ 19:

² ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 600:

տանէն անմիջապէս կը մեկնի Սոֆիա եւ կընդունի վարժարանը... եւ յաջողութեամբ կ'աւարտի զինուորական ուսման ընթացքը 1907-ին»¹:

Դիւանական փաստաթղթերից եւ նամակներից պարզում է, որ Գարեգին Նժդեհին Սոֆիայում հովանաւորել է դաշնակցական մեծահարուստ Սուքիաս Սուքիասյանը, վերջինիս աղջիկ էփրմիեն էլ դառնում է նրա կինը, որին 1910 թ. մարտի 27-ին նամակ է գրում Նախընթացի բանտից² եւ որի հետ նշանուում է բալկանեան պատերազմի աւարտից յետոյ (տե՛ս ստորեւ): :

1908 թ. որպէս սպայ ուղարկուել է Սալմաստ³, նշանակուել Սամսոն Թադէոսեանի օգնական: Այդ ժամանակ ՀՅ Դաշնակցութիւնն իր գործիչներով (Սեփէմ Խան, Նիկոլ Դուման, Քեռի, Խէչօ, Մարտիրոս Չարուխչեան եւ ուրիշներ) ու ջոկատներով Ռոստոմի գլխաւորութեամբ փաստօրէն ղեկավարում էր Պարսկաստանի յեղափոխական-սահմանադրական պայքարը, քրդերից պաշտպանում հայկական գիւղերը: Գարեգին Նժդեհը գործուն մասնակցութիւն է ունեցել պարսկական յեղափոխութեան նախապատրաստութեանը:

Ինչպէս նշուած է 1909 թ. դատական արձանագրութիւններում, Նժդեհը նրա յեղափոխական ծածկանունն էր⁴:

Առաջին անգամ Նժդեհ է ստորագրել Պարսկաստանից Լեւոն եղբորը յղած 1908 թ. յուլիսի նամակում⁵:

«Նժդեհ» նշանակում է պանդուխտ, օտարական, տարաշխարհիկ: Ի դէպ, Նժդեհ է կոչուել նաեւ «Մուրճ» ամսագրի աշխատակիցներից մէկը, որը առնուազն 1889 թուականից թղթակցել է այդ ամսագրին⁶ եւ արեւմտահայ մի մտաւորական (Ոսկեան

¹ Աւօ, Նժդեհ, էջ 22: տես նաեւ Կարօ Գեորգեանի «Գ. Նժդեհ, Կենսքն ու գործը» յօդուածը, Կահիրէի «Յուսաբեր» օրաթերթ, 1957 թ. օգոստոսի 15:

² ՀՅ Դաշնակցութեան գործ, ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 3, էջ 2278:

³ Վարդան Գեորգեան, Լեւոնահայաստանի հերոսամարտը, Երեւան, 1991, էջ 11-ի տողատ. ծանօթ.:

⁴ Դաշնակցութեան գործ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 555:

⁵ Տես նամակի ուսերէն քարգմանութիւնը, ՀՅ Դաշնակցութեան գործ, ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 554, հայերէն քարգմանութիւնը՝ «Նախիջեւան», 2001 թ., քիւ 20:

⁶ Նժդեհ, Մակու, «Ներշնչանք», երգ (բանաստեղծութիւն), «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889 թ., քիւ 2, էջ 271-272; Նժդեհ, Կարօս (բանաստեղծութիւն), «Մուրճ», 1889, քիւ 5, էջ 740; Նժդեհ, Ճանապարհորդական նկարագրութիւն, Մուրճ, Թիֆլիս, 1903 թ., քիւ 4, էջ 132-149 (տեղեկութիւնը մեզ է տրամադրել բանասիրութեան դոկտոր Հ. Բախշեանը):

Մ., Ռ. Ազատական, նահատակուած 1920 թ.)¹:

1908 թ. օգոստոսի վերջին (Հաւանաբար զէնք ու զինամթերք տեղափոխելու նպատակով) վերադարձել է Երեւանի նահանգ, եկել Հայրենի գիւղ, ուր կազմակերպել էր դաշնակցական խումբ՝ մեծ մասամբ իր ազգականներից ու ընկերներից: «Դաշնակցութեան դատ»-ի արձանագրութիւններից կարելի է հետեւեցնել, որ խմբում ընդգրկուել էին նրա հօրեղբորորդի, 28-ամեայ Բազրատ Գեւորգի Սահակեանը*, իր քեռի, 45-ամեայ Սահակ Գիւլնազարով Մկրտչեանցը, Յունան Սահակեանցը (ըստ երեւոյթին Գեւորգ հօրեղբոր միւս որդին), Յունան Յարութիւնեանը, Ստեփան Յովհաննէսեանը եւ ուրիշները²:

1908 թ. սեպտեմբերի 6-ին, Կոնստի գիւղապետի օգնականի բողոքի հիման վրայ Գարեգին Նժդեհը Վերին Ազա գիւղում ձերբակալուած է: Նա այցելել էր եղբորը՝ Լեւոն Տէր-Յարութիւնեանին, որն այդ ժամանակ Վերին Ազայի ծխական դպրոցի ուսուցիչ էր: Խուզարկութեան ժամանակ Նժդեհից առգրաւուած են աշակերտական երկու տետր եւ Սոֆիայից 1906 թ. հոկտեմբերի 15-ին եւ ըստ երեւոյթին Պարսկաստանից 1908 թ. յուլիսին մօրը եւ եղբորն ուղարկած նամակները³:

Նժդեհը նախ արգելափակուած է Ջուղայում, ապա տեղափոխուած Նախիջեւանի բանտ, ուր մնում է առնուազն մինչեւ 1910 թ. մարտի 27-ը, որտեղից նոյն օրը նամակ է գրել Հարազատներին⁴, ապա 1910 թ. հոկտեմբերի երկրորդ կէսին տարւել է Նովոչերկասկի բանտ, ուր հոկտեմբերի 22-ին հարցաքննուել է, ապա նորից հտ բերուել⁵:

Նախիջեւանի բանտում ծեծուած է մի կողակի, որը անխնայ ծեծել էր բանտարկեալներից մէկին¹:

Բանտարկուածեան ժամանակ մօրն ու վեց մօրաքոյրներին արգելուած էր այցելել իրեն: Այդ բանտարկուածեան մասին Նժդեհը Հայ մայրերին բնորոշող մի շատ յուզիչ մանրամասն է բերում. «Կալանաւոր էի ցարի օրով, եւ մայրս ամէն կիրակի ինձ այցի կու գար հեռաւոր գիւղից, կու գար ոտքով: Իր ճիւղեական վշտից ազդուած կը գայրանայի, որ ինձ համար կը նահատակէ իր անձը: «Ի՞նչ, - կը պատասխանէր, - կա՞նք նստեմ, կա՞նք վայելեմ, երբ շղթայակիր եւ զոկանքների մէջ ես դու»: «Դէպի քաղաք ճամփայ ընկնելուց առաջ, - կը պատմէին քոյրերս, - մայրիկը հսկումի է կանգնում Տիրամօր առջեւ, արիւն լալիս, կուրծքը եկեղեցու քարերին քսում, մինչեւ որ արիւնեն ստիճքները խեղճ կիմ կ'ուզէ որ քարերն էլ զգան իր ցաւը: Ահա մայրը, որի նման են բոլոր հայ մայրերը»²:

1910 թ. վերջերից 1911 թ. գտնուել է տարբեր կալանավայրերում*:

Նժդեհի ձերբակալութեան առթիւ է, որ 1909 թ. իրեն ձոնուած են «Արագի փախի ծնած ընկեր» տողերով սկսւող յայտնի երգը:

1912 թ. յունուարի 17-ից 1912 թ. մարտի 20-ը ընկած Հատուածում դատարանը Գ. Նժդեհի մասին հետեւեալ վճիռն է կայացնում. «Հակաօրինական Դաշնակցութիւն» կազմակերպութեանը մասնակցելու մէջ նրան ներկայացուած մեղադրանքը ապացուցուած չլինելու պատճառով, արդարացնել»³:

Սակայն, նա բանտից փախչել էր աւելի վաղ, 1911թ.:

¹ Վահան Զարդարեան, Յիշատակարան, տարեգիրք 1942 տարուայ, Գահիրէ, 1942 (տպագրուել է 1941թ.):

* Նժդեհի Գեւորգ հօրեղբոր գերդաստանը Սահակեանց է կոչուել իրենց պապ Տէր-Սահակի անունից: Նման ազգանունափոխութիւնը տվորական երեսոյթ էր այդ ժամանակ:

² «Դաշնակցութեան գործ, ՀՀ ԼԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 3, էջ 1636-1640): Դաշնակցութեան գործի 6 հատորանոց հսկայ ժողովածոյում Նժդեհին վերաբերող մեր՝ վերը եւ այսույետ յղած նիւթերը առաջին անգամ գիտական հասարակութեանը ծանօթացրել է պատմաբան Յ. Գրիգորեանը, Նժդեհի 115-ամեակի առթիւ ՀՀ ԳԱ ակադեմիայում 2001 թ. յունիսի 8-ին կայացած գիտաժողովում):

³ ՀՅԴ գործ, ՀՀ ԼԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 553-555:

⁴ ՀՅԴ գործ, ֆ. 4047, ց. 3, գ. 3, էջ 2278:

⁵ ՀՅԴ գործ, ֆ. 4047, ց. 3, գ. 5, էջ 4178:

¹ Սիմոն Բաբայանի յուշերից, «Նախիջեւան», 2001 թ., թիւ 20:

² Նժդեհ, Բանտային գրառումներ, Երեւան, 1993, էջ 57:

* Հատուած Գ. Նժդեհի 1946 թ. նոյեմբերի 16-ի հարցաքննութեան անտիպ արձանագրութիւնից, ՀՀ ԱՆ դիւան, ԿԳՖ), հտ. 2, ֆոնդ 12997, հայերէն թարգմանութիւնը տպագրուած է «Նախիջեւան», 2000, թիւ 13, էջ 7:

³ ՀՅԴ գործ, ֆ. 4047, ց. 3, գ. 6, «Դատավճիռներ» բաժին, էջ 13, 16:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

«Բանտերում՝ Ջուլֆայից մինչև Պետերբուրգ մնացել են ավելի քան երեք տարի, 163 դաշնակցականների ծանօթ դատավարութիւնից յետո՝ Սիբիր չընկնելու համար, անցել են Բուլղարիա: 1912 թ. հայ կամաւորներից կազմակերպել են* վաշտ եւ Անդրանիկի հետ մասնակցել Բալկանեան պատերազմին— յանուն Մակեդոնիո եւ Թրակիոյ ազատագրութեան: Պատերազմի վերջին շրջանում, իբրեւ յեղափոխականներ հրաժարել ենք մասնակցել բալկանեան ժողովուրդների ներքին կռիւներին եւ զօրացրել Հայկական վաշտը: Ես վիրատրվել եմ այդ պատերազմում: Հայոց դրօշակը եւ շատ հայ կուրծքեր զարդարուել են քաջութեան խաչերով»:

(Ինքնակենսագրութիւն)

Դիւանական փաստաթղթերը վկայում են, որ Նժդեհը բանտից արձակուելուց յետոյ անցնում է Բուլղարիա: 1912 թ. աշնանը ՀՅ Դաշնակցութիւնը Բալկանեան պատերազմի նախօրեակին բուլղարական բանակում Թուրքիայի դէմ կռուելու համար կազմակերպում է Հայ կամաւորական շոկատ: Աւելի քան 200 Հայեր ցուցակագրուում են բուլղար բանակի կազմում գործող «Մակեդոնո—Օդրինեան կամաւորութիւն» անուան տակ մօտ 15 հազար զուտ կամաւորներից բաղկացած զօրամիաւորմանը: Սակայն, երբ Անդրանիկը Վառնայից ժամանեց Սոֆիա՝ միանալու Հայ կամաւորներին, Հայերը դիմեցին բուլղարական կառավարութեանը՝ ունենալ զուտ

* Կամաւորական ջոկատը կազմելու պաշտօնական թոյլտուութիւնը Բուլղարիայի ռազմական իշխանութիւնները տուել էին Գ. Նժդեհին, քանի որ նա բուլղար բանակի սպայ էր (փաստաթուղթ տե՛ս ստորեւ):

Հայերից բաղկացած առանձին վաշտ: Թէեւ բուլղարական բանակի օրէնքներով վաշտը պիտի ունենար 150–160 մարդ, բայց Հայերի համար բացառութիւն արուեց՝ ունենալ 231 (այնուհետեւ՝ 273) զինուոր, կամաւորական բանակում կռուել սեփական սպայական կազմով եւ դրօշակով, որն, ի դէպ, կարել ու գործել էին բուլղարահայ օրիորդները¹:

Հայկական վաշտի հրամանատար է կարգուում պողպորուչիկ Գարեգին Նժդեհը, վոյվոդա (ղեկավար)՝ Անդրանիկը: Արմէն Սեւանը Նժդեհի եւ այդ պատերազմում Հայկական վաշտի մասին գրում է. «Երկար գանգուր մագերով, գեղեցիկ դէմքով, սեւ, կրակոտ, փայլուն աչքերով, նուրբ կազմուածքով մի 24 տարեկան (այդ ժամանակ Նժդեհը 26 տարեկան էր— ծան. Ռ. Հ.) վառվում երիտասարդ՝ կեանքը գաղափարին նւիրած, ստրկի ազատութեան համար տանջուած եւ տանջելիս, մարմնով փխրուն, բայց հոգով տոկուն, ընկերի համար մեռած, ամէն բոլոր պատրաստ իր անձը զօհելու, ամէնքին սիրելի Գարեգին Նժդեհը (էջ 25–26): Եւ ահա կամաւորութեան հրամանատար գեներալ Գեներալ հոկտեմբերի 3–ին 1912 թ. հրամանի մէջ հետեւեալ տողերը նւիրեց հայ գնդին.

Հրաման

Մակեդոնո—Օդրինեան կամաւորութեան

N 2

Իք. Սոֆիա, 3 հոկտեմբերի 1912 թ.

8. Իր կամքով ներկայացած, ռուսահպատակ, պահեստի ենթասպաների դպրոցի պահեստի ենթասպայ Գարեգին Նժդեհին հրամայում եմ հաշուել կամաւորութեան մէջ տոյն տարւայ սեպտեմբերի 23–ից: Նոյն մարդուն եմ յանձնարարում հայ կամաւորներից կազմակերպել մի հայկական վաշտ:

Կամաւորութեան հրամանատար՝

(ստորագր.) գեներալ—մայեօր Գեներալ.

Շտաբի կառավարիչ՝

(ստորագր.) ընդհանուր շտաբի մայեօր Դարվինգով.

Ճիշտ է. երրորդ Մակեդոնո—Օդրինեան բրիգադայի աղիտանտ՝ պորուչիկ Մանովսկի.

Հոկտեմբերի 8–ին հայկական վաշտն արդէն կազմ ու պատրաստ էր եւ

¹ Արմէն Սիւնի, Հայկական վաշտը 1912–1913 թթ. Բալկանեան պատերազմում, Բաքու, 1914 թ., էջ 20–28; Արմէն Մարմարեան (Վահան Թոթովէնց), Ջօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920; Արմէն Սիւնի, Հայկական վաշտը 1912–1913 թթ. Բալկանեան պատերազմում, Սոֆիա, 1926 (սոյն գիրքը թարգմանուել է Արմէն Սիւնու նոյնանուն հայերէն գրքի բուլղարերէն թարգմանութիւնից՝ կրճատմանով):

հենց այդ օրն էլ նրա հրամանատար Գարեգին Նժդեհն այդ մասին զեկուցեց իր բարձր իշխանութեան հետեւեալ կերպով.

«Մակեդոնո-Օդրիներան կամաւորութեան հայկական վաշտ. N 1 8-ին հոկտեմբերի 1912 թ. Սոֆիա.

Կամաւորութեան հրամանատարին, այստեղ.

Չեկուցում.

Չեկուցանում եմ Ձեզ, պարոն զեներալ, որ այսօր կազմակերպեցի հայկական վաշտը՝ բաղկացած մի սպայից եւ 230 կամաւորներից:

Նոյն թից վաշտը կերակուր է ստանում VIII կոստուրեան դրուժինայից: Վաշտի հրամանատար՝ պողպորուչիկ Գարեգին Նժդեհ

«Հոկտեմբերի 8-ին խուռն բազմութեան ներկայութեամբ հայկական եկեղեցու մէջ կայացաւ դրոշակի օծումը: Վաշտի հրամանատարը (Գ. Նժդեհէը — ծան. — Ռ. Հ.) մի կրակուր ճառ արտասանեց զինուորներին, ասելով, թէ պէտք է երդնենք, որ թշնամին երբէք մեր մէջքը չի փակնելու, որ մեր կրծքերը եւ ճակատներն ենք դէմ անելու թշնամու զնդակներին. եւ վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Մեր դրոշակի առաջին օծումը կատարեց այստեղ, եկեղեցական արարողութեամբ, իսկ երկրորդ եւ իսկական օծումը կը կատարուի կուրի դաշտում, թնդանօթների եւ հրացանների նւագի տակ»:

Իսկ երբ հոկտեմբերի 16-ին վերջնականապէս կազմակերպեց Պրոպր-գերովի երրորդ բրիգադան, հայկական վաշտը մտաւ նրա մէջ՝ կազմելով փասաններկուերորդ դրուժինայի երկրորդ վաշտը: Ահա եւ այդ դրուժինայի առաջին հրամանը, որի մէջ յիշում է եւ հայկական վաշտի մասին.

Հրաման

12-րդ Լոզեմբուրգեան դրուժինային.

N 1

Սոֆիա, 20 հոկտեմբերի 1912 թ.

5. Երկրորդ (հայկական) վաշտի հրամանատար եմ նշանակում պողպորուչիկ Գարեգին Նժդեհին:

Դրուժինայի հրամանատար՝ պողպորուչիկ Կունե:

Այդպիսով ուրեմն, հայկական վաշտը կազմ էւ պատրաստ, որպէս միութիւն, մտաւ Մակեդոնո-Օդրիներան կամաւորութեան երրորդ բրիգադայի փասաններկուերորդ դրուժինայի մէջ, նրա երկրորդ վաշտը կազմելով եւ բաղկացած էր 230 կամաւորներից, մէկ սպայից եւ մէկ «վոյվոդա»-հերոսապետ Անդրանիկից: Եթէ մինչեւ այժմ Տանկապրանի դէմ պատերազմի դաշտ էին դուրս եկել չորս դաշնակից պետութիւններ՝ Բուլղարիա, Սերբիա, Սեւ լեռն եւ Յունաստան, այդ օրսանից արդէն դաշնակից ազգերի թիւը դարձաւ հինգ, որովհետեւ հայ ազգն էլ պաշտօնական կերպով՝ իր որդիների մասնակցութեամբ՝ մտաւ այդ դաշնակցութեան մէջ իր դարատր կատարող եւ վայրենի թշնամու դէմ¹:

Բոլշեւիկեան նշանաւոր գործիչ, յետագայում Խորհրդային Ռուսաստանի ղեկավարներից Լ. Տրոցկին 1912 թ. հոկտեմբերին այսպէս է ներկայացնում Նժդեհին. «Վաշտի հրամանատարը սպայի հագուստով մի հայ էր, որին պատում էին պարզապէս «ընկեր Գարեգին»: Գարեգինը Պետերբուրգի իրաւաբանութեան բաժնի նախկին ուսանող էր, որը ներգրատուել էր Գաշնակցութեան «Լրժինեան» նշանաւոր դատավարութիւնում, երեք փարուայ բանտարկութիւնից յետոյ արդարացուեց: Նա Սոֆիայում անցել էր զինուորական ուսումնարանի դասընթացները. Գարեգինը բանաստեղծ էր, բնմրասաց եւ ուսմանից: Գարեգինը իզուր չէ, որ ջոկատին օրական 10 ժամ սովորեցնում էր զօրաշարքային արունսփին: Հրամաններ փալուց եւ խօսելուց նրա շայնը խոստովացել էր...»²:

Աղբիւրները նշում են Հայկական վաշտի, նաեւ Անդրանիկի ու Նժդեհի արտակարգ քաջութիւնն այդ պատերազմում: Օրինակ՝ Ուզուն-Համիդիերի կուրի մասին Հայկական վաշտի բուժակ եւ գրագիր, բուլղար Դիմիտրը գրում է.

«...Գնդակները կարկտի պէս փեղացին վաշտի զիւին... կռիւն սկսուեց: Պողպորուչիկ Գարեգինը... ժամանակ չկորցրեց, իր ետեւից փարաւ ամբողջ վաշտը, բարձրեց բնական պատնէշների՝ բլուրների յետեւում եւ այնպէս, առանց զոհեր փալու, թշնամու ուժեղ կրակի փակ հասաւ Մակա-Թէֆէին, ուր Անդրանիկը իւր 14 կորիճներով արդէն սպասում էր նրան: Այդպէս թշնամին արդէն նկատեց վաշտի շարժումները եւ սկսեց ուժեղ կերպով ուժակոծել Թէֆէն... Առաջիադատումն անհնարին էր, մինչեւ

¹ Արմէն Մեան, Հայկական վաշտը 1912-1913 թթ. Բալկանեան պատերազմում, Բաքու, 1914, էջ 28-31: Գրքի հեղինակը սխնեցի էր, կամաւոր դարձել էր այն բրիգադի թիշկը, որի մէջ շնորհակատ էր հայկական վաշտը:

² Антис Отто (Л. Троцкий), Андраник и его отряд, газета "Киевская мысль", Киев, 19 июля, 1913г.: Հմտ. Բանբեր Հայաստանի արխիւների, Երեւան, 1991 թ., քիւ-2, էջ 113:

որ թշնամին չվճարուի իր լեռան գագաթից եւ մինչեւ որ շառնէին նրա գլխաւոր դիրքերը 768 ուրն բարչրութեան վրայ: Թէն առաջին դիրքերի հեռաւորութիւնը 1200 քայլ հազիւ լինէր, սակայն նրանք գտնուում էին քազմաթիւ բլուրների յետեւում, այնպէս որ թշնամին իշխում էր նրանց վրայ եւ շարունակ ունեւորուում:

Սակայն վաշտը նպատակ է դնում առնել գլխաւոր դիրքերը...

Հայկական վաշտից դէպի աջ դիրք է բռնած նոյն դրուժինայի երրորդ վաշտը պոռպորուչիկ Թորգոմի հրամանատարութեան փակ, իսկ դէպի ձախ կողմը գտնուում են Պրիլեպեան փասնեբորդ դրուժինան եւ գնդակագիրը, որ... փայլում է արեգակի լոյսի փակ, այնպէս որ հեռուից անշուշտ նկատելի է:

Այդ հանգամանքը չվրիպեց Անդրանիկի սուր հայեացքից եւ դիտողութիւնից եւ նա իսկոյն սպայի ուշադրութիւնը դարձրեց այդ վրանգաւոր հանգամանքի վրայ, քայց արդէն ուշ էր: Թշնամու ոռուբերը մէկը միւսի յետեւից սկսեցին ընկնել գնդակագիրի չորս կողմերում... եւ փեղն ու փեղը ծառայողներից երկուսին սպանեց, իսկ չորսին ծանր վիրաւորեց՝ կիրաւորելով նրանց ուրբերը: Միւս ծառայողները փախչում են հեռու, իսկ հարեւան զինուորների մէջ իրարանցում է ընկնում: Չախ կողմի զինուորները թողնելով իրենց դիրքերը խմբովին յետ եւ նահանջում՝ իրենց հետ մղելով եւ յետեւում գտնուող շարքերը... (Նահանջն ու խուճապը ընկնում է բուլղարացի՝ կամաւորների մէջ — Ռ. Հ.): Այրի յորջանքը հասնում է ամենքին, բարչրանում է իրարանցում, հրաման չէ լսում, չկայ մէկը, որ անկարգութեան առաջն առնէ. թշնամին էլ նկատելով այդ աւելի է սաստկացնում կրակը եւ շրապնելներով համարեա լցնում է այդ փորածութիւնը: Զինուորները սարսափած դէս ու դէն են ընկնում՝ չկարողանալով որոշել՝ որտեղ է աւելի ապահով...

Բոպէն կրիտիքական էր:

Այդ իրարանցումի, փախանման եւ սարսափի միջոցին լսեց պոռպորուչիկ Գարեգինի ջղային ջայնը. «Կանգնի՛ր», եւ առաջ նետեց՝ վերականգնելու կարգը: Նա իր սրով կրրեց յետ նահանջողների առաջը, կանգնեցրեց նրանց եւ հայ միւս կամաւորների օգնութեամբ բոլորովին կանգնեցրեց փախչողներին: Յետոյ սուրը բարձր բռնած՝ «յառաջ» գոչեց եւ ինքն առաջ անցաւ:

— Զեր սրի շողայն ամբողջապէս երեւան է հանում չէր ոյժն ու կարողութիւնը — նկատեց հեռուից մի սպայ:

Իսկ նա ո՛չ մի ուշադրութիւն չդարձնելով այդ գովասանքին՝ շարունակեց իր հրամանները, մինչեւ որ զինուորները նորից գրաւեցին առաջայ դիրքերը եւ քաց արին ուժեղ կրակ:

Թշնամու կողմից կրակը սկսեց մեղմանալ, իսկ մի քիչ յետոյ համարեա դադարեց:

Դրութիւնը փրկւած էր, կարգը վերականգնւած, դիրքերն էլ պահպանւած...

Այդ գրոհի միջոցին հայերն ունենում են երեք գոհ, մէկը սպանւած եւ երկուսը վիրաւոր: Երբ սպանւածին փոխադրեցին ապահով տեղ, համարեա ամենքը գնացին իրենց ընկերին տեսնելու վերջին անգամ: Իսկ Գարեգինը սաստիկ յուզւած՝ համբուրեց ընկած հերոսի սառը ճակատը եւ դառնալով իր զինուորներին՝ ասաց.

«Զինուոր ընկերներ, ես չեմ անիծում այն րոպէն, որ նա ընկաւ պատերազմի դաշտում, նա առաջինը չէ եւ ո՛չ էլ վերջինը նրանցից, որոնք իրենց կամքով եկել են զոհելու Մակեդոնիայի ազատութեան սեղանի առաջ: Բայց ես ձեզ կոչում եմ դէպի վրժիճնորութիւն, վրժիճնոր լինել ձեր սիրելի ընկերոջ համար, վրժիճնոր լինել մակեդոնական եւ հայկական ժողովուրդների բոլոր զոհերի համար, որոնք հեծում են տաճկական սեւ լծի տակ... Յառաջ...»:

Թշնամու վրայ ոգեւորւած յարձակում գործելու միջոցին մէկ կամաւոր վիրաւորւած էր: Սանիտարները կանգնեցնում են արիւնը եւ կապում խոր վերքը... Իւր աշակերտին հասած այդ դժբախտութիւնից զգացած եւ նրա ցոյց փած հերոսութիւնից ուրախացած Գարեգինը թնայնօթների եւ հրացանների դժոխային կրակի փակ ժամանակ է գտնում մի երկրորդ գրեւոր բոլոր վիրաւորւածներին:

«Սիրելի ընկերներ, համբուրում եմ ձեր սուրբ վերքերը, կեցցէ՛ Մակեդոնիայի ազատութեան համար մղող կռիւը: Դուք պատուով կատարեցիք ձեր պարտքը — Գարեգին»:

Իսկ վիրաւորւածները, ուրախ եւ երջանիկ, իսկոյն պալատախանում են նրան. «Սիրելի հրամանատար, մենք համբուրեցինք քո նամակը: Երբ առողջանան մեր վերքերը, մենք պարտաւոր ենք նորից կռիւ դուրս գալու մեր եղբայրների թշնամու դէմ: Կեցցէ՛ն հայ կամաւորները»:

Մահացուցիչ կրակը աւելի եւ աւելի էր զոհեր իլում շարքերից. դիրքը պաշտպանում է յամառօրէն, չնայած թշնամու սաստիկ ունեւորութեան: Հայկական վաշտը ամենավրանգաւոր փեղն է բռնած, նա կրում է ամենամեծ քաջութեամբ եւ փայլիւ է ամենից շար գոհեր: Նրա հասցէին ամբողջ դիրքի վրայ բերանից բերան անցնում է շնորհաւորական աղաղակը.

— Բրաւօ արմէնցի, բրաւօ (Բրաւօ, հայեր, բրաւօ):

Սակայն մինչեւ կէս օր մի քայլ անգամ առաջ գնալ անհնարին եղաւ միշտ կրում էին միեւնոյն տեղը: Բայց անհրաժեշտ է քշել թշնամուն, որ պալատախանում լինելով փոսերի մէջ՝ իր կրակով մեծ վնասներ է պատճառում մեզ:

Այժմ Անդրանիկը՝ առասպելական հայ հերոսը, որ սաստիկ հրացանաչութեան ժամանակ կատարեալ հանգարութեամբ առաջ էր գնում թշնամու գնդակների փարափի փակ, այժմ իր 14 որսկան գնդակաշիգների հետ ա-

